Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24333
331. 87
Р-94

Ա. ՐՕԻՑՄԱՆ, Մ. ԳՐԻՆ

# ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԱՆ

Թարգմ. Ալ. ԴՈՍՏՅԱՆ

ԳԻՆԸ 10 ԿՈՊ
Цена 10 коп

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
1932
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ

24 AUG 2013

331.87
Ր-94

15 JAN 2010

Ա. ՌՈՒՍՏՄԱՆ, Մ. ԳՐԻՆ

# ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՏՆՏՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԱՆ

1006
28592

«Հարվածային բրիգադայի աշխատակիցներ,
մարդկության ալմաստի հիմքն եք դուք»։

ԱՖԻՆՈԳԵՆՈՎ «ՍՏՐԱԽ»

Թարգմ. ԱԼ. ԴՈՍՏՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ“.
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ
1932 Թ.

Гос. ... ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна

24333

Книгоиздательство
„СЕВЕРНЫЙ КАВКАЗ"

## 1. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արդյունաբերական կոմյերիտի աշխատանքի օրակարգում շատ գործեր և խնդիրներ կան։

Խոշոր, հարկավոր գործեր։

Կարևոր, անհետաձգելի խնդիրներ։

**Բարձրացնել սոցմրցումն ու հարվածայնությունը ամենաբարձր աստիճանի։**

Վերջ տալ դիմազրկությանը։

Ջախջախել հավասարանքը։

Կադրեր պատրաստել։

Տիրապետել տեխնիկային։

Եվ ելի, և ելի։ Յուրաքանչյուր գործ կանչում է ենթուզիաստներին, յուրաքանչյուր խնդիր սպասում է իր լուծման։

Վրա հասնել միանգամից ամեն բանի, խառնի-խուռն կամ հանդիստ հերթականություն հաստատել, («այսօր կռիվ մղել սոցմրցման ամենաբարձր աստիճանի հասցնելու համար, վաղը—վերջ տալ դիմազրկությանը, մի ամսից հետո—հավասարանքին ...») — կնշանակի ճեղքվածք պատրաստել։ Պետք է շատ գործերի մեջ լենինորեն գտնել «հիմնական օղակը, վորից բռնելով դուրս քաշել ամբողջ շղթանը»։ Պետք է հրատապ հարցերի շարանից դուրս բերել խնդիրների խնդիրը, վորն այս րոպեյիս ապահովագրում է հաղթանակը։

Տնտհաշվարկի բրիգադ—ահա այսօրվա հիմնական օղակը, ահա խնդիրների խնդիրը արդյունաբերական կոմբինատների համար։

Տնտհաշվարկի բրիգադ — ահա սոցմրցման և հարվածայնության բարձրագույն ձևը։

Ինչպես խոշոր հանգույցային կայարանում իրար կտրում են տասնյակ յերկաթուղագծեր, տնտեսհաշվարկի բրիգադում հանգուցի յեն բռնվում արդյունաբերության կարևորագույն խնդիրները, առաջնորդի հիմնական պատվերները՝

Բանվորական ուժի հոսունություն։

Կահավորման դիմազրկություն,

Մանր բուրժուական հավասարանք,

Ուժերի անուղիղ բաշխում։

Մեխանիզմների վոչ լրիվ ոգտագործում,

Տեխնիկական անզորություն,—

Այս բոլորը լիկվիդացիայի յեն յենթարկվում, այս բոլորը հաղթվում է մինչև վերջնական վոչնչացումն ուղիղ կազմակերպված, լավ շտկված տնտհաշվարկի բրիգադում։ Հարվածայինների հեղափոխական էնտուզիազմը, գումարած նյութական շահագրգռման վրա-ահա ժամանակակից փուլի սոցիալիստական արդյունաբերության հաղթանակի համառոտ մաթեմատիկաբար մաքլած ֆորմուլան։

Իսկական տնտհաշվարկի բրիգադ—ահա այդ ֆորմուլի լավագույն մարմնացումը կյանքի մեջ։ Տնտհաշվարկի բրիգադներն առաջին ամիսը չէ, վոր գոյություն ունեն։

Տնտհաշվարկի բրիգադներն արդեն շատ գեղեցիկ էջեր են մտցրել առաջին հնգամյակի արդֆինպլանի պայքարի հերոսական գրքի մեջ։

Տնտհաշվարկի բրիգադները փառավոր, անհերքելի, անվիճելի կերպով արդարացրել են իրենց։

Բրիգադների տնտհաշվարկի անցնելը պետք է մասսայական դառնա, պետք է ընդգրկի բոլոր բրիգադները։

Դա շատ անգամ հաստատված է, դա որինագրված է շատ կազմակերպությունների շատ վորոշումներով։



Բայց, այնուամենայնիվ, մինչև հիմա դեռ շատ քիչ բրիգադներ են անցել տնտհաշվարկի։

Վերցնենք Լենինի գործարանը (Ռոստովում)։ Այստեղ 200-ից ավելի բրիգադներ կան, սակայն դրանցից միայն 60 են տնտհաշվարկի անցել։

Եվ այդ, արդեն տնտեսական հաշվարկի անցած բրիգադներից, շատերն են վոր կարողացել են իսկապես ուղիղ, որինակելի կերպով, ստալինորեն գործադրել տնտհաշվարկը, բաշխել ուժերը, կազմակերպել աշխատանքը, ստեղծել նյութական շահագրգռում։

Ուստի այդ առաջավոր, լավագույն, որինակելի բրիգադների փորձառության հաղորդելը,— կոնկրետ, մանրամասն, խոր փորձառության հաղորդելը, փորձառություն, վորը վոչ միայն պատմեր, թե ինչ է արված, այլ և պատասխաներ, թե ինչպես է արված, — այդպիսի փորձառության հաղորդելն իսկապես—

Հիմնական խնդիր է։

Փորձը պետք է վոչ միայն ցույց տա մասսաներին նրանց հերոսներին։

Փորձը պետք է ակտիվորեն միջամտի արդֆինպլանների կատարման պայքարին։

Փորձին պետք է տիրապետեն մասսաները, նա պետք է նյութական ուժ դառնա սոցիալիզմի համար տարվող կռիվներում։

Այս, մինչև ծայր համառոտացրած, գրքույկի խնդիրն —ցույց տալ Լենգործարանի շոգետար սարքող ցեխի առաջին յերիտասարդական տնտհաշվարկի բրիգադի միամսյա աշխատանքի կոնկրետ փորձառությունը, — Հախվերդյանի բրիգադի փորձառությունը, վորը տնտհաշվարկի յե անցել 1931 թվի հոկտեմբերի 1-ից։

## II. ՄԻ ՈՐ, ՎՈՐ ՆՄԱՆ Է ԲՈԼՈՐ ՄՅՈՒՍ ՈՐԵՐԻՆ

Շչակը դեռ չէր հրամայել կանգնել դազգահի մոտ։

Մինչև շչակը դեռ 10 րոպե կա։ Բայց Հախվերդյանի բրիգադն արդեն հավաքվել է։

Նախ քան գործի անցնելը, բրիգադը մանրամասնորեն քննում է ամբողջ օրվա աշխատանքի պլանը։

Օրինակ, հոկտեմբերի 10-ին պետք էր բարձրացնել Էմ-686-36 կարգի շոգետարի նեցուկ ձողերը և ամրացնել նրա բոլտերը, բարձրացնել ՈՎ կարմիր շոգետարի ձողերը և ամրացնել բոլտերը, դրստել յերկու շոգետարները և խարտոցել սեպերը, պատրաստել յերկու շոգետարների համար 100 պատրույգ, նորոգել 40 խուփ բուկսի յուղամանների համար։

Քննելով այդ պլանը, բրիգադը յեկավ այն վորոշման, վոր աշխատանքը կարելի յե վերջացնել կես ժամ առաջ։ Բրիգադիրն ուժերը բաժանում է ըստ բրիգադի յուրաքանչյուր անդամի վորակի, աշխատանքի արտադրողականության և դժվարության։ Եվ շնորհիվ ուժերի այդպիսի բաշխման, բրիգադն ավարտում է յուղամանների խուփերի նորոգումը մեկ ու կես րոպեյի ընթացքում, մինչդեռ պլանում դրա համար պահանջվում է 8 րոպե։

Եվ հոկտեմբերի 10-ին բրիգադն ավարտեց իր աշխատանքը կես ժամ առաջ։ Կես ժամ մարդիկ աշխատեցին վաղվա առաջադրության հաշվին։ Վաղվա համար հաղթանակ էր կոփվում։

Այդ օրը նման է բրիգադի աշխատանքի բոլոր մնացած օրերին, սկսած նրա տնտեսական հաշվարկի անցնելու ժամանակից։

## III. ՎԵՐԱՑՎԱԾ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 10-ին Էմ 686-36 կարգի շոգետարը հեռացավ բրիգադից։

Եվ նա հիմա էլ չի վերադառնա։

Նրա յետևից էլ վոչ վոք չի վազի շտկելու, դրստելու համար։



Շոգետարը հեռացել է վերջնականապես։

Եվ տնտեսական հաշվարկի անցնելու օրից բոլոր շոգետարները հեռացել են այդպես վերջնականապես։

Թերակատար բան չկա։

Իսկ առաջ—մինչև տնտեսհաշվարկը—բուքսերի, սեպերի, ձողերի վրա աշխատող բրիգադի սոսկալի չարիքներից մեկը միշտ յեղել են թերակատար աշխատանքները։

Առաջ որենը 2-3 անգամ տղերանց խթում էյին։ Հենց ուզում էր ջահելը մի բան սկսել, մեկել տեսնես կանչում են՝

—Վազիր շուտով... շոգետարը կանգնած է... պետք է նախազգուշական յերկաթե կապեր շինել... կամ սեպեր շտկել, կամ մի ուրիշ բան։

Եվ պետք է վազել։

Հետո Հախվերդյանը հարցնում է՝

— Ո՞վ է, տղերք, շինել այս բանը։

Տղերքը լռում են։ Հրաժարվում են։ Վոչ վոք չի ուզում իրա վրա վերցնել անփույթ աշխատանքի խայտառակությունը։ Եվ ամեն օր, գրեթե ամեն մի շոգետարի վրա թերակատար աշխատանք էր բացվում։

Այդպես էր առաջ մինչ տնտհաշվարկը։

Իսկ տնտհաշվարկին անցնելուց հետո բրիգադը բաց է թողել 42 շոգետար հոկտեմբերին, 44 շոգետար՝—նոյեմբերին։ Եվ միմիայն 2 անգամ թերակատար աշխատանքի դեպք է յեղել, այն էլ չնչին բանի։

Ինչպե՞ս ստացվեց այդ։

Շատ հասարակ կերպով։

Տնտեսական հաշվարկ մտցնելուց հետո բրիգադը հենց սկզբից վոչնչացրեց յուրաքանչյուր մանրամասնության դիմազրկությունը։

Բրիգադը վարում է իր աշխատանքների օրագիրը, վորի մեջ նշանակվում է բանվորի ազգանունը և նրա կատարած աշխատանքը յուրաքանչյուր շոգետարի վրա։

Օրագիրն անձամբ ստորագրում է աշխատանք կատարող բանվորը։

Որագրում գրած է՝

Շոգետար 218, կարգ ԵԽ.

Ծողովակների շինելը և բուքսիրի խուփերի դրումը—Դեսյադնիկով, Սեմաշկո։

Շոգետար 686-37, կարգ ՈՎ.

Բոլտերի շտկելը — Հախվերդյան, Սոպրունով։

Յուրաքանչյուր հարվածային պատասխանատու յե իր աշխատանքի համար։

Դիմազրկությունն իսկապես ջախջախված է։

Չկա վոչ մի դիմազուրկ կահավորում։

Չկա վոչ մի դիմազուրկ մանրամասնություն, աշխատանքի վոչ մի դիմազուրկ պրոցես։

Մեկ անգամ ընդունող վերատեսուչը գտավ, վոր բուքսային սեպերում կարճ բոլտեր են խփած։

Բրիգադիր Հախվերդյանը բաց արեց աշխատանքի որագիրը և իմացավ, վոր բոլտերը խփել են Սկարգա և Սավչենկո բանվորները։ Անփույթ աշխատանքի համար այդ ընկերները բրիգադիրից հանդիմանություն ստացան, ի դեպ՝ միակ հանդիմանությունը բրիգադի տնտեսհաշվարկով աշխատելու ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում։

Բայց այդպիսի դեպքեր հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 10-ը յեղել են միայն 2։

Յերկու թերակատար գործ 70 որվա աշխատանքի ընթացքում։

Դա ռեկորդ է։

## IV. ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՆՎԱՃԱԾ ՀԱՐՅՈՒՐՆԵՐ

— Մենք պետք է բարձրացնենք ներքին արդյունաբերական կուտակումը։

— Մենք պետք է տնտեսենք ամեն մի կոպեկը։

— Մենք պետք է իջեցնենք մինչև մինիմում ինքնարժեքը, օգտագործելով դրա համար բոլոր հնարավոր միջոցները։



Այդպես է ասում կուսակցությունը։

Հոկտեմբերի ընթացքում նյութերը ստանալն իջեցված է 28 տոկոսով։ Զուտ խնայողություն—341 ռուբլի։ Նոյեմբերի ընթացքում—վոչ պակաս (առույգ հաշիվ դեռ չկա)։

**Այդպես է պատասխանում Հախվերդյանի տնտհաշվարկի բրիգադը։**

Շոգետար ՈՎ, № 307։

Ըստ պլանի պետք է ստանալ 23 ռ. 47 կոպեկի նյութ։

Բրիգադը ստացել է 13 ռ. 22 կոպեկի։

Խնայողություն—10 ռուբլի 25 կոպեկ։

Շոգետար ԵԽ, № 683-36։

Ըստ պլանի պետք է ստանվեր 34 ռ. 22 կոպեկի նյութ։

Բրիգադը ստացել է 19 ռ. 01 կոպեկ։

Խնայողություն—15 ռ. 21 կոպեկ։

Մի-մի ռուբլիով, չերվոնեցով մեկ ամսվա ընթացքում կուտակվել է յերեք և կես հարյուր ռուբլու տնտեսում։

Այդ հարյուրները հարվածայինները յետ են նվաճել անփութությունից, անտնտեսականությունից, գտել են աղբանոցում, բարձրացրել են ցեխ-արհեստանոցի հատակից։

ԵԽ կարգի 686-3 շոգետարի համար պահանջվում եր 40 հատ դյուիմանոց գայկա։ Բրիգադիրը պահանջեց միայն 10 գայկա։ Մնացածը տղերքը ջոկեցին թափթփուկից, նորոգեցին և գործի բաց թողին։ Յերեք ռուբլուց ավելի խնայողություն միմիայն գայկաների վրա։

Շոգետարին հարկավոր է միջին թվով 20 սրածայր ձողիկ։ Յուրաքանչյուր ձողիկն արժե 25 կոպեկ։ Բայց Հախվերդյանը գրեթե բոլորովին չի պահանջում նոր ձողեր։ Բրիգադն ուղղում է հին ձողերի փորագրած տեղերը, նորից փորագրում է և օգտագործում նրանց։

Յուրաքանչյուր շոգետարին հարկավոր է միջին թվով 50 գազային խողովակ։ Ուրիշ բրիգաներն ապսպրում են մեկ խոշոր գազային խողովակ (1 ռ. 35 կոպեկ), տալիս են նրան մեքենայական բաժնին մաս-մաս կտրտելու համար

(աշխատանքը—3 ռուբլի)։ Յեվ ուրիշ բրիգադներին 50 գազային խողովակները նստում են 4 ռուբլի 35 կոպեկ։

Հախվերդյանի բրիգադին գազային խողովակները վոչինչ չեն նստում։ Հարվածայինները գնում են շոգետար քանդելու տեղը։ Այնտեղ թափթփված են հին խողովակներ։ Նրանց հավաքում են, խարտոցում են, ծայրերը կտրում,—և խողովակները պատրաստ են։

Մի ժամանակ պատրույգների համար մետաղաթել չկար։ Հենց ուղղակի դեն գցիր շոգետարը թերակատար։ Բայց հարվածայինները գտնում են պահեստում անպետք պողպատի պարան։ Նրանից վերցրեցին 5 կիլոգրամ, վոր նստեց 10 կոպեկ։ Այդ հերիք յեղավ 35 շոգետարի։ Այդ բանում տնտեսեցին 3 ռուբլի 40 կոպեկ, և վոր գլխավորն է, շոգետարները չուշացան պատրույգների պատճառով։

Իսկ վորա՞կը։ Կրկնակի նորոգման բացակայությունը լավագույն ապացույց է, վոր խնայողությունը չի վնասել վորակին, իսկ ժամանա՞կը։ Ծրագրի կատարելը և գերակատարելը բրիգադի կողմից լավագույն ապացույց է, վոր յեթե ույժերն ուղիղ բաշխվեն, բանվորական օրը խտացվի, ապա տնտեսումը չի խանգարի արտադրողականությանը, նրանից ժամանակ չի խլի։

## V. «ՅԵՎ ԱՃՈՒՄ, ՅԵՎ ԱՃՈՒՄ ԵՆ ՏՂԵՐՔԸ»

12 բանվորներից, վորոնք աշխատում եյին տնտեսհաշվարկի բրիգադում հոկտեմբերին, մայիսին, 10 յեղել են հասարակ բանվորներ։

Ամառվա ամիսների ընթացքում, տնտեսհաշվարկի անցնելու պատրաստման պրոցեսում դրանք բոլորն էլ 4 և 5 կարգի փականագործներ դարձան։

Հասարակ բանվոր էլ վոչ վոք չի մնացել։

Նոյեմբերին բրիգադի կազմը նորոգվեց։ Յերկուսը հեռացան, յերկուսը փոխադրվեցին հետ մնացող բրիգադներ։ Բրիգադի մեջ ընդունվեցին էլի չորս հասարակ բանվոր-



ներ։ Այս րոպեյիս ինքը, բրիգադիրը և բոլոր վորակյալ տղերքն օգնում են նորեկներին վորակավորում ձեռք բերելու։

Նոր հասարակ բանվորները փականագործների հսկողության տակ աստիճանաբար տիրապետում են գործին։ Շուտով նրանք փականագործի անուն կստանան, կսկսեն ինքնուրույն աշխատել։

Բրիգադը վոչ միայն վորակյալ կադրեր է պատրաստում, հասարակ բանվորներին փականագործ դարձնելով։

Բրիգադը հոգ է տանում նաև բարձրացնելու արդեն վորակյալների վորակավորումը և տիրապետելու շոգետարներ նորոգելու գործի գիտությանը և տեխնիկային։

Հախվերդյանի ղեկավարության տակ աշխատում է շոգետարի տեսական և գործնական ուսումնասիրության մի խմբակ։

Ցեխում ամեն որ հարվածայինները տեսել են, թե ինչպես են բարձրացնում շոգետարի լանջերը։ Յեվ բոլորովին չեն էլ մտածել, թե այդ ինչ ույժ է դրանց բարձրացնում։

— Ո՞ւմ ինչ, թե ինչպես են բարձրանում...

Խմբակի առաջին պարապմունքին բրիգադիրը պատմեց և ցույց տվեց լանջերը բարձրացնող ջրաբաշխական մամուլի կազմի մակարդակը։

Տղերքը զարմացան, յերբ իմացան, վոր այդպիսի բարդ և հետաքրքիր մեքենա յե աշխատում ցեխում։

Միանգամից հետաքրքրվեցին խմբակով։

Վորպեսզի դան առաջին պարապմունքի, պետք եր մեկ մեկ խնդրել տղերանց։ Ասում եյին՝

—Ժամանակ չկա... Զբաղված ենք... Ծանրաբեռնված ենք...

Իսկ առաջին պարապմունքից հետո արդեն հարցնում եյին՝

—Յե՞րբ պետք է լինի հետևյալը։

—Գիտեք, տղերք, չեմ կարող, ժամանակ չկա, ծանրաբեռնված եմ...—ասում է Հախվերդյանը։

—Չե, ընկեր, դու մի կերպ աշխատիր, ժամանակ գտիր...

Սիստեմատիկ կերպով խմբակն աշխատում է տասնօրյակը մի անգամ։ Բոլորն էլ հաճախում են։

Այսպես, տնտեսհաշվարկի բրիգադի հենց ներսում, կադրեր են կոփվում, պատրաստվում է արտադրական—տեխնիքական ինտելիգենցիա բանվոր դասակարգի մարդկանցից։

## VI. ՀԱՎԱՍԱՐԱՆՔԸ ԿՐՆԿԱԿՈՒ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ ԵՆ

Ամառը, մինչև տնտեսհաշվարկի անցնելը, բրիգադում փականագործները վաստակում էին միջին չափով 60 ռուբլի։

Հոկտեմբերին աշխատավարձը բարձրացավ։

4 կարգի փականագործը—105 ռուբլի։

7 կարգի փականագործը (բրիգադիր)—184 ռուբլի։

Բայց դրանով հավասարանքը դեռ վերջնականապես ջախջախված չէր։

Յեթե փականագործները բրիգադում վաստակում էին 85, 100-ական ռուբլի, ապա նրանց կողքի վոչ վորակյալ մաքրող—բանվորները ստանում էին 100-ական ռուբլի։ Հարևան վոչ տնտ-հաշվարկային բրիգադներում, նույն 4 կարգի փականագործները վաստակում էին մինչև 200 ռուբլի։

Բրիգադը գերակատարել է իր պլանը ցեխի ճեղքվածքի ժամանակ։ Իսկ հարվածայինները ստացել են հոկտեմբերին ավելի քիչ, քան ուրիշ բրիգադների բանվորները։ Ընկեր Ստալինի՝ մանր բուրժուական հավասարանքը վոչնչացնելու համար տված պատվերի այդ կոպիտ խախտումը սկսեց նսեմացնել տղերանց տրամադրությունը։

Բրիգադիրը քանիցս անգամ դիմել է վարչության։

— Ամեն ինչ կանենք... կ'բարձրացնենք... խոստանում է վարչապետը։

Բայց խոստումներով աշխատավարձը չի բարձրանում։ Դժգոհությունը մնում է անփոփոխ։



Բրիգադում ավելի հետամնաց տղաները սկսեցին սկանդալ սարքել, գործի դուրս չգալ։ Մանավանդ աչքի յեր ընկնում Փրոլուշկինը։ Նա չորս անգամ գործի չգնաց, իրեն կողմը քաշեց նաև մեկ բանվորի և ի վերջո ինքը խնդրագիր տվեց հեռանալու մասին և սովորեցրեց յերկու տղերանց էլ նույնն անել։

Միմիայն այն ժամանակ ուշքի յեկավ վարչությունը, տեղից շարժվեց արհմիությունը։

Նոյեմբերի կեսին շտապ կերպով վերաքննեցին նորմաները և գնահատումները։ Տնտ-հաշվարկայինների աշխատավարձը բարձրացավ։ Աշխատավարձի սիստեմը սկսեց համապատասխանել աշխատանքի արտադրողականության։

4 կարգի փականագործը վաստակեց 110-120 ռուբլի։

5 կարգի փականագործը—130-140 ռուբլի։

7 կարգի փականագործը—220 ռուբլի։

Տղերանց տրամադրությունը բարձրացավ։ Փրոլուշկինին աշխատանքի դուրս չգալու, աշխատանքը լքելու համար բրիգադից հեռացրին։ Նոյեմբերի ընթացքում 42 շոգետարի փոխարեն բրիգադը բաց թողեց 44։

## VII. ԲՐԻԳԱԴՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ։

Հախվերդյանի տնտ-հաշվարկու բրիգադում իրականացվում են ընկ. Ստալինի հիմնական ցուցմունքները։

Ուժերը բաշխվում են ուղիղ։

Վոչնչացվում է դիմազրկությունը։

Ոգտագործում են ներքին միջոցները, ստեղծվում է ներքին բրիգադային կուտակում։

Վոչնչացվում է հավասարանքը։

Պատրաստվում են կադրեր։

Կռիվ է մղվում տեխնիկայի յուրացման համար։

Յեվ հետեվանքներն իսկույն հայտնաբերվեցին։ Բրիգադիրներն իրենց պարտավորությունները կատարում են

ըստ տնտես-հաշվարկի պայմանագրի։ Վերցնենք հոկտեմբերյան պայմանագիրը և կետերով հետևենք նրա իրականացմանը։

1. Կատարել և գերակատարել ծրագիրը։ Վարչության առաջադրությունն է — 40 շոգեսար 12 մարդուն, հարվածայինների հանդիպական ծրագիրը — 45 շոգեսար։

*Զանազան պատճառներով (բրիգադիրին ժամանակավորապես ոգտագործել են ընդհանուր գործարանային աշխատանքի վրա, բանվորների հիվանդություն) հոկտեմբերին աշխատել է 9 մարդ։ Այնուամենայնիվ վարչության բոլոր առաջադրությունները գերակատարվել են։ Տրվել են 42 շոգեսարներ։*

2. Իջեցնել նյութերի սպառումը 10 տոկոսով ի դիմաց նորմայի։

*Գերակատարում։ Սպառումն իջել է 28 տոկոսով։ Խնայողություն — 341 ռուբլի։*

3. Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 5 տոկոսով։

*Գերակատարում։ Չնայած 25 տոկոս բանվորական ույժի բացակայության, վարչության առաջադրությունը գերակատարված է (2 շոգեսար)։ Հետևապես հարվածայինների արտադրողականությունը բարձրացել է ավելի քան 25 տոկոսով։*

4. Իջեցնել օժանդակ նյութերի համար հատկացրած գումարը (նավթ, փուշ) 3 տոկոսով։

*Գերակատարում։ 3 տոկոսի փոխարեն խնայողություն է ստացվել 77 տոկոսի։ Բաց է թողնված օժանդակ նյութերի համար 4 ռուբլ. 24 կոպ., ծախսված է 96 կոպեկ։*

5. Թույլ չտալ աշխատանքի դուրս չգալու վոչ մի դեպք (վոչ հարգելի պատճառով)։

*Հոկտեմբերին վոչ հարգելի պատճառով գործի դուրս չգալու վոչ մի դեպք չի յեղել։*

6. Բոլոր գործիքներն ու ինվենտարը պահել լավ և կարգին։

*Ինվենտարն ու գործիքները կարգին են ու լավ։ Կոտրվածք չի յեղել։ Այդպիսի դրության ձեռք է բերվել*



*շնորհիվ ինվենտարի և գործիքների դիմազրկության կատարյալ վոչնչացմանը։*

7. Վերացնել բեռակատարությունները և վերջ տալ զուր տեղ ցեխում ման գալուն։

*Վերացված է։*

8. Գործիքի կոտրվելու դեպքում, յերբ նա աշխատանքի համար անպետք է դառնում, արձանագրություն կազմել և հանձնել պահեստին։

*Այս կետը անշարժ է մնացել։ Կոտրվածք չի յեղել։ Արձանագրություն կազմելու կարիք չի յեղել։ Պահեստ հանձնելու բան չի յեղել։*

9. Քննել ամբողջ աշխատանքը բրիգադային արտադրական խորհրդակցություններին։

*10-15 րոպեյանոց փոխանցիկ—հանդիպական խորհրդակցություններ տեղի յեն ունենում ամեն որ։*

10. Նյութեր կամ գործիքներ չլինելու դեպքում վաղորոք տեղեկացնել վարչությանը։

*Նյութերի բացակայության մասին վարչությանը հայտնվել է իր ժամանակին։ Գործիքի պակասություն չի յեղել։*

11. Աշխատանքները կատարել իր ժամանակին, թույլ չտալ, վոր ուրիշ բրիգադների գործն ուշանա։

*Ուրիշ բրիգադների գործը խափանելու վոչ մի դեպք Հախվերդյանի բրիգադի պատճառով չի յեղել։*

*Ահա բրիգադի բոլոր պարտավորությունները։*

*Վոչ մեկը դրանցից չեն մոռացել, վոչ մեկն անկատար չեն թողել հարվածայինները։*

*Բոլորն էլ կատարված են, իսկ մեծամասնությամբ նաև գերակատարված են։*

## VIII. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ

*Բայց պայմանագիրը յեղել է յերկուստեք։ Վոչ պակաս կարևոր պարտավորություններ տվել է բրիգադին ցեխի վարչությունը։*

1. Արդֆինպլանը հասցնել բրիգադին ամսեամիս։

*Չի կատարված։ Ամսեամիս հայտնվում է բրիգադին միայն նորոգվելիք շոգեքարշների քանակը։ Ի՞նչ դասի պիտի լինի նորոգումը։ Ո՞ր կարգի պիտի լինեն շոգեքարշերը։ Այս բանի մասին բրիգադն իմանում է միայն այն ժամանակ, յերբ շոգեքարշն անձամբ հայտնվում է ցեխում։ Բրիգադը հնարավորություն չի ունենում վաղօրոք ստույգ կերպով հաշվի առնել աշխատանքն ու մասնիկները պատրաստել վորոշ կարգի, վորոշ դասի նորոգումի համար։*

*Ցեխի վարչությունն ունի այդ պարտավորությունը կատարելու լրիվ հնարավորությունը։ Չէ՞ վոր շոգեքարշները, նորոգումի սպասելով, յերկար ժամանակ կանգնած են լինում գործարանի բակում կամ Զարեչնայա կայարանում։ Հարկավոր է միայն վաղօրոք պահանջել գծից նորոգումի մասյաները։ Ցեխի վարչությունը չի կարողանում մի ամիս առաջ լրիվ արդֆինպլանը հասցնել բրիգադին, ապա թող հասցնի 15 օր առաջ, 10 օր առաջ։ Դա բրիգադին մեծ օգնություն կտար։ Բայց այդ էլ չի արված։*

2. Իր ժամանակին բրիգադին մասնիկներ հայթայթել։

*Չի կատարված։ Մասնիկներ բրիգադին տալիս են վոչ իր ժամանակին, անկանոն կերպով։ Յերբեմն միանգամից ուղարկում են 3 կոմպլեկտ, յերբեմն էլ յերկու օր իրար վրա վոչ մի մասնիկ չեն տալիս։ Հետո նորից ելի մի քանի կոմպլեկտ միանգամից։*

*Մինչդեռ մասնիկներ կան, մասնիկները պահեստում ընկած են։ Հարկավոր է միայն, վոր վարչությունն իսկապես գործի անցնի, և պարտավորությունը կատարված կլինի — բրիգադն իր ժամանակին մասնիկներով հայթայթված կլինի։*

3. Իր ժամանակին բրիգադին հայթայթել պահանջվող քանակի անհրաժեշտ նյութեր։

*Չի կատարված։ Նյութերը տրվում են վոչ իր ժամանակին և պակաս քանակով։ Սիստեմատիկաբար պակասում է՝ մանվածք պատրույգների համար, մետաղաթել պատրույգների համար, դայլաններ — դյույմանոց, կես դյույմանոց և 7-8 դյույմի։*



4. Տասն օրվա ընթացքում կարգի բերել բանվորական տեղը (սարքոցը, մամուլ և այլն)։

*Այս պարտավորությունը տրված էր հոկտեմբերի համար։ Հետո նա մտցրվեց նոյեմբերի պայմանագրի մեջ։ Հիմա դեկտեմբերն է։ Բայց մինչև հիմա չեն ուղղված ցեխում վոչ դազգյահը, վոչ մամուլը։ 4-5 մարդուն մեկ նվագում միայն յերկու կարգին մամուլ կա։ Սարքոցի վրա աշխատել չի կարելի, նա ամբողջովին ծռմռված է, կորացած։*

*Միմիայն անփութությունն է խանգարել վարչությանը իրագործել այդ պարտավորությունը։*

5. Ամրացնել բրիգադի վրա գործիքներ և բանվորական գույք 12 հոգու համար։

*Ցեխի վարչությունը կարող է հպարտանալ իր հարվածային աշխատանքով։ Այս պարտավորությունն ամբողջապես և լրիվ կերպով իրագործված է։ Ճիշտ է, վոչ մի ճիգ, վոչ մի ճկունություն այստեղ վարչությունից չէր պահանջվում։ Բայց, համենայն դեպս, ուրիշ կատարված պարտավորություններ չլինելու պատճառով, դրանով էլ կարելի յե հպարտանալ։ «Անճարն է կերել բանջար»։*

6. Ամսեամիս բրիգադի ներկայացուցիչների հետ միասին ստուգել կահավորումն ու գործիքները և համապատասխան նորոգումներ անել։ Եթե կոտրվածքը տեղի չե ունեցել բրիգադի մեղքով, նորոգումը կատարել նրա հաշվին։

*Հախվերդյանը քանի անգամ ասել է, վոր պետք է բանալիները կարգի բերել (մանավանդ 7-8), վոր հարկավոր են նոր բրեր, բայց չնայած բրիգադիրի հայտարարություններին, հոկտեմբերին (և նոյեմբերին) գործիքների ստուգում և նորոգում չի յեղել։*

7. Բոլոր ցուցանիշներով ստացած խնայողության համար բրիգադին պարգև տալ ըստ գործարանի վարչության կողմից հաստատված և գործարկոմի հետ համաձայնեցված նորմաների։

им. А. Мясникяна

Չի կատարված։ Այս տողերը գրվում են դեկտեմբերի 10-ին։ Դեռ մինչև հիմա յել բրիգադին մրցանակ չեն տվել նոյեմբերին ստացած խնայողության համար։

8. Այս պայմանագրի գործունեյության մոմենտից սկսած 5 օրվա ընթացքում բրիգադի համար 200-300 մոմանոց ելեկտրոլամպ դնել 2 և 3 նվագներում լույսն ուժեղացնելու համար և արկղ տալ գործիքների համար։

Չի կատարված վոչ հինգ օրվա, վոչ տաս օրվա, վոչ միամսյա, վոչ յերկու ամսյա ժամանակի ընթացքում։ Արկղներ գործիքների համար դեռ մինչև հիմա յել չկան։ Լամպը կախել են միայն դեկտեմբերի 8-ին և այն էլ, յերբ բրիգադիրը, ցեղի վարչությունից լամպ ստանալու հույսը կտրած, ինքն է համոզել ելեկտրո-ցեխի վարպետին լույսն ուժեղացնել։

9. Բանվորական ույժի հեռացնելն ու ավելացնելը կատարել բրիգադի հետ համաձայնության գալուց հետո։

Ելի մի անգամ կարող է հպարտանալ վարչությունը։ Այս պարտավորությունը նորից կատարված է ամբողջովին։ Ճիշտ է, այստեղ ևս վարչությունից առանձին մի ճիգ ու ջանք չի պահանջվել։

10. Բրիգադից ստացվող բարեկարգման առաջարկությունները կյանքի մեջ կիրառել անհապաղ կերպով։

Սա վարչության վերջին պարտավորությունն է։ Ցեվ այս վերջինի վրա պետք է կանգ առնել մանրամասնորեն։

Նորոգման խանդակում (կանավա) մի պարանոց էր շինված։ Խանդակում կանգնում են 3 շոգեքարշներ։ Նրանցից 2 կարելի յե նորոգել։ Յերրորդը—չի կարելի վոչ մի կերպ.—տակը չես կարող մտնել։

Սրա պատճառով պարապուրդը հասնում էր ամիսը 50-60 ժամի։

Բրիգադն առաջարկություն է մտցնում — վոչնչացնել պարանոցը։

Չնչին աշխատանք է հարկավոր դրա համար, սակայն խնայողությունը հսկայական է։



Վարչությունն առաջարկության հետ համաձայն է, բայց նրա իրականացումը ձգձգում է հնգօրյակից հնգօրյակ, տասնօրյակից տասնօրյակ։

Այս ժամանակ հանգստի մի օր ամբողջ բրիգադը յեկավ գործարան։ Տղերքը զինվեցին թիյերով։ Պարանոցի ամբողջ հողը դեն շպրտեցին։ Պարանոցը չքացավ։ Ինքը բրիգադը, վարչությունից հուսահատված, իրագործեց իր բարեկարգման առաջարկությունը։

Բայց չե՞ վոր տնտեսհաշվարկի պայմանագրի վերջին կետում բոլորովին ուրիշ կերպ է ասված...։

## IX. ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ՅԵՐԿՈՒՍՏԵՔ ԻՐԱԳՈՐԾԵԼ

Յերկկողմանի պայմանագրի իրագործումը պարտադիր է յերկու կողմերի համար ել։ Այդ մասին, ըստ յերևույթին, անփույթ կերպով մոռացել է Լենգործարանի շոգեքարշների ցեխի վարչությունը։

Առաջին տնտհաշվարկի յերիտասարդական բրիգադի հարվածայիններն օրեց օր, հետեվողաբար կռվել են յուրաքանչյուր պարտավորության համար և հաջողեցրել են նրա իրականացումը։

Ցեխի վարչությունն, ընդհակառակը, օրեցօր և հետեվողաբար չի իրագործել իր պարտավորությունները, և դրա պատճառով բոլոր նոյեմբերյան պարտավորությունները բացի յերկու չնչին պարտավորություններից, վորոնք վարչությունից վոչ մի ջանք չեն պահանջում,—մնացել են անկատար։

Վարչության այդ անփութությունը զարմանալի յե։ Բայց ինչո՞վ է զբաղված վարչությունը, յեթե նա հենց իր պարտավորությունները չի ուզում կատարել ամենալավ բրիգադի առաջ։ Մի՞թե տնտհաշվարկի պայմանագիրը, վոր հարվածայինների ծրագիրն է դառել, վարչությունը բանի տեղ չի դնում և պարտավորություններ է տվել զուտ սին բառի համար։

Այդպիսի անփութությունը անհանդուրժելի է։ Լավագույն տնտեսհաշվարկի բրիգադի համար, վոր բոլշևիկյան աշխատանքի օրինակներ է ցույց տալիս, պետք էր ապահովել հաղթանակների, նոր ռեկորդների բոլոր պայմանները։ Նրան պետք էր շրջապատել հոգատարությամբ և ուշադրությամբ։ Վարչությունը դրա փոխարեն չի իրագործել իր բոլորովին իրագործելի պարտավորությունները, որևէ խոչընդոտներ առաջ բերելով բրիգադի աշխատանքների դեմ, սիստեմատիկաբար խանգարելով նրան։

Այդպիսի անփութությունն ոպորտունիստական է։ Վարչությունը փաստորեն իջեցրել է բրիգադի աշխատանքի տեմպերը, հնարավորություն չի տվել նրան լայնացնել իր աշխատանքները և դրանով վնասել է գործարանի արդֆինպլանի ընդհանուր իրագործման։

Նա ուներ բոլոր հնարավորությունները կատարելու իր պարտավորությունները բրիգադի դիմաց։ Այդ քաջ գիտեն հարվածայինները։ Այդ ավելի լավ գիտե, անկասկած, նաև վարչությունը, այլապես նա չէր ստորագրի պայմանագիրը։

Ապա ուրեմն ինչո՞ւմն է բանը, գուցե ցեխի վարչությունն ուզենա թաքնվել «օբյեկտիվ, չնախատեսնված պատճառների» շիրմի հետևը։

Այդպիսի փորձը վաղօրոք անհաջողության է մատնված։ Կուսակցությունը բավական ցայտուն կերպով մերկացրել է «օբյեկտիվ» պատճառների ապոլոգետների օպորտունիստական էությունը։ Թաքնվել այդ պատճառների հետևը, արդարանալ այժմ վոչ վոքի չի հաջողվի։

Վարչությունը պետք է չարդարանա և մի կերպ դուրս պրծնի դրությունից, այլ բոլշևիկորեն պետք է շտկի իր թերությունները և աշխատի ապագայում, ինչպես հարվածայինները, վոչ միայն կատարել, այլ և գերակատարել իր պարտավորությունները։

Մենք դիտմամբ այդպես մանրամասն կանգ առանք վարչության պարտավորությունների յուրաքանչյուր կետի



իրագործման քննության վրա։ Այդ կետերը ակներև կերպով ցույց են տալիս, թե դեռ ինչպիսի հսկայական, անսպառ հնարավորություններ ունի բրիգադն արտադրողականությունն ու վորակը բարձրացնելու համար։

Այդ հնարավորություններից շատերը գտնվում են վարչության ձեռքին։

Իր պարտավորությունների հարվածային կատարմամբ նա պետք է այդ հնարավորությունները դնի բրիգադի տրամադրության տակ։

Օրինակելի բրիգադին հարկավոր է օրինակելի սպասարկում։

Ցեխի վարչությունն իր պարտականությունները կատարելիս պետք է հավասարվի հարվածայիններին։

Երկկողմանի պայմանագիրը պետք է իրագործեն յերկու կողմերն էլ հավասար չափով ճշտորեն։

## X ԳԱՆՁՈՒՄ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱՐ

Հախվերդյանի բրիգադը Լենգործարանի լավագույն կոմյերիտական բրիգադներից մեկն է, վորը կարողացել է, առաջնորդի պատվերների իրագործման հիման վրա, ստեղծել իրեն բրիգադում, ստալինյան ֆոնդ հնգամյակի չորրորդ տարվա համար—

— Երկու հատ ժամկետից առաջ նորոգած օդեսար։

— Երեք բարեկարգման առաջարկություն, վորոնցից մեկն արդեն իրականացված է իրեն, բրիգադի ուժերով։

— Խնայողություն նյութերի սպառումից 600 ռուբլուց ավելի (նոյեմբերինը դեռ ստույգ չի հաշված)։

— Աշխատանքի վորակի բարձրացում, կրկնակի նորոգման վերացում (բրիգադի պատճառով)։

Ահա բրիգադի հիմնական գանձումները ստալինյան ֆոնդի համար։

Հարվածայինները չեն սահմանափակվում սրանով։ Իրենց տնտեսհաշվարկի աշխատանքի փորձը նրանք մտցնում են նաև ուրիշ բրիգադների մեջ։

Այդպես, Հախվերդյանի բրիգադը վորոշել է տնտ-հաշվարկը փոխադրել նաև հարևան բուքսային բրի-գադը։

Այս րոպեյիս բոլոր նախապատրաստական աշխատանքները վերջացված են։ Նյութերը հանձնված են հաշվելու համար։ Մոտիկ որերս Հախվերդյանի բրիգադի բուքսիրի վրա բուքսային բրիգադը տնտհաշվարկու կդառնա։

Լենինը գրել է, վոր կոմունիզմը սկսվում է այնտեղ, վորտեղ բանվորն որեցոր անձնազոհ կերպով հոգ է տանում իր արտադրության մասին։

Այդպիսի հոգատարություն կա Հախվերդյանի բրիգադում։

Այստեղ մարդիկ բարձրացնում են հատակին ընկած գայկան, վորովհետև մետաղի յուրաքանչյուր կտորը թանկ է հանրապետության համար։

Այստեղ մարդիկ վոչնչացրել են ամեն մի մանրամասնության դիմազրկությունը, վորպեսզի ավելի արագ և լավ կերպով նորոգեն յերկրին հարկավոր շոգետարները։

Այստեղ մարդիկ տիրապետում են արտադրության տեխնիկայի խորություններին, վորպեսզի կրկնապատկեն, յեռապատկեն իրենց արտադրողականությունը, վորպեսզի սոցիալիստական արդյունաբերությանը տան նոր պրոլետարական հրամանատարներ։

Իսկական սոցիալիստական վերաբերմունքի շատ նմուշներ (դեպի աշխատանք, դեպի արտադրություն) կարելի յե գտնել Հախվերդյանի տնտհաշվարկի բրիգադում։ Այդպիսի նմուշների վրա պետք է սովորեցնել և դաստիարակել գործարան յեկող նոր պրոլետարական կադրերին։

Հախվերդյանի բրիգադում դեռ կան շատ թերություններ։ Նա դեռ չի օգտագործել իր բոլոր հնարավորությունները։ Մենք իրավունք ունենք նրանից դեռ ավելի բարձր ռեկորդներ սպասել արտադրողականության, վորակի, խնայողության վերաբերյալ ապագայում։—

Բայց անհերքելի յե,



Վոր իր 70 որվա աշխատանքի ընթացքում Լենգործարանի առաջին յերիտասարդական տնտհաշվարկի բրիգադը կարողացել է, ջերմ տեմպերը չիջեցնելով, ցույց տալ վճռական տարվա արդֆինպլանի համար, ստալինյան պայմանների համար տարվող կռվի իսկական որինակներ։

Անվիճելի յե,

Վոր Հախվերդյանի բրիգադում իրագործված է փառավոր կերպով և արդարացրել է իրեն սոցիալիստական արդյունաբերության հաղթանակի հակիրճ, հղկած մաթեմատիկական ֆորմուլը ներկա ետապում. Ենտուզիազմ, գումարած տեխնիկայի ուղիղ կազմակերպումն, բազմապատկած նյութական շահախնդրության վրա։

Անպայման—

Տնտհաշվարկի հարվածայիններին պետք է հարգել, բրիգադիր Հախվերդյանից պետք է սովորել, վորովհետև նա ճշտորեն, ընկեր Ստալինի ցուցմունքներով է առաջնորդում իր բրիգադը։

---


Ответственный редактор
А. Авакьян
Технический редактор
Г. М. Маркарян

№ 2096

1932

Сд. в набор 3/II—1932 г.
Сд. в печать 14/III—1932 г.
Об'ем 3/4 печ. листа
Тираж 1500 экз.

Уполкрайлита № 1092. Газ.-кн. тип. СККПО. Статформат Б6 125Х176. Заказ № 658
Гор. Ростов на Дону, Знаков 41000

2397 624

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. Խնդիրների խնդիրները . . . . . . . . . . . . . . . 3

II. Մի որ, վոր նման ե բոլոր մյուս որերին . . . . . 5

III. Վերացված ե յուրաքանչյուր մանրամասնության դիմազրկությունը . . . . . . . . . . . . . . . 6

IV. Անփութությունից նվաճած հայրուրներ . . . . . . 8

V. «Յեվ ածում, և ածում են տղերքը» . . . . . . . . 10

VI. Հավասարանքը կրնկակոխ հետապնդում են . . . . 12

VII. Բրիգադիրները իրենց պարտավորությունները գերակատարում են . . . . . . . . . . . . . . . 13

VIII. Վարչությունն իր պարտականությունները չի կատարում . . . . . . . . . . . . . . . . . . 15

IX. Փոխադարձ պայմանագիրն յերկուստեք իրագործել . 19

X. Գանձում ստալինյան ֆոնդի համար . . . . . . . . 21


им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203008

На армянском языке

А. Рутман и М. Грин

ХОЗРАСЧЕТНАЯ БРИГАДА АХВЕРДЯНА

Из-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԳՐԱՊԱՀԵՍՏԸ՝
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ. ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ., 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)